# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

<<14 >> << մայիս >> 2014 N 40

ք. Եղեգնաձոր

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԵՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱԱՆ ՆԱԽԿԻՆ ՇԵՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2014 թվականի ապրիլի 9-ի N01/18/1998-14 գրությունը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշռում գտնվող նախկին շենքը /184.33քմ տարածք/ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն հանձնելու նպատակով ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

2.Հանձնման ընդունման աշխատանքների կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Սամվել Շահբազյանի վրա:

3..Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Է. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի
մայիսի 14 - ի N 40 կարգադրության

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշռում գտնվող նախկին շենքը /184.33 քմ տարածք / Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանն հանձնելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ`

1.Մելսիկ Հարությունյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ

Անդամներ`

2.Սամվել Շահբազյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ

3.Ասատուր Մկրտչյան - ՀՀ Վայոց ձորի մարզի << Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

4.Իսկուհի Սայադյան - ՀՀ Վայոց ձորի մարզի << Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաշվապահ

5. Սերյոժա Սուքիասյան- ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի համայնքի ղեկավար /իր համաձայնությամբ/

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար

Կ.ՍԱՀԱԿՅԱՆ